

ներուն: Իր զգացումները զորս երբեմն դատողութեան հետ ալ միացած կը գրտնեմ, եւ քողածածուկ, ոչ յանդուգն, քիչ մը հեգնական ընդվզումով զոր միշտ զսպել

կ'աշխատի, կ'երեւի հոս ու հոն քառեակի մը վերջին տողին մէջ: Առ այդ օրինակներ չեմ բերեր, միայն ուշադրութեան կը յանձնեմ իր մէկ քառեակը.

*Ճանապարհորդ քեզ յայն ժամ ասեմ որ զճանապարհի հատըն գիտենաս,
Ծնել ես ւ աշխարհս եկել տուր խաբար թէ ուստի՞ կուգաս:
Եկել ես յաւտար երկիր մէկ ցուցու թէ յի՞նչ կու կենաս,
Մեռնիս դու ւ ի հող մտնիս մէկ ասայ թէ յո՞ւր կու գնաս:*

ասկէ զատ շատեր կան, տող մը, բառ մը՝ ուր դատողութիւնը կու գայ Խայեամի պէս հարցնել մինչեւ անպատասխան յուսամատիլը ու վայրկեան մը միայն յոգնելէ վերջ նուիրուիլ կրօնքին, աւանդութեանց առ այդ տուած պատասխաններով համոզման: Ասիկա երեւոյթ մըն է որ ժողովրդական ստեղծագործութեան մէջ պիտի չերեւար. վասն զի ժողովուրդը հաւատքը խնդրոյ նիւթ չ'ըներ ունենալով Աստուած կամ աստուածներ պիտի գոհանար ուրկէ՞ գալու, ինչո՞ւ համար կամ ո՞ւր երթալու պէս յաւիտենական ու խորհրդաւոր հարցումներուն՝ ունեցած հաւատքով եւ աւանդութիւններով:

Այս քառեակները որ Պարսիկ տաղասացութեան մասնիկներու հայացած ձեւերը կը ներկայացնեն, արտադրութիւնն ըլլալուն Ժ.Գ. կամ Ժ.Գ. դարու հեղինակի մը: Հեղինակի մը՝ սիրուած, ժողովրդական, որ

վարժուած էր կրօնական դպրութեան մէջ, փորձուած կեանքին մէջ, հաշակած անոր դառնութիւնները, արար աշխարհ տեսած, իր երկրին ու ազգակիցներուն վարք ու բարքին մօտէն եւ լաւատեղեակ: Վերջապէս միամիտ աշուղ մը չէ ան, այլ իրապէս խորհող գրող մը, որ կրնայ վերլուծել, մեկնաբանել կեանք, կրօնք, զգացում:

Այս քառեակները վերջապէս աղբիւր են Հայ ազգագրութեան, լեզուաբանութեան, առակախօսութեան եւ նաեւ արհեստի ու արուեստի ուսումնասիրութեան համար: Նիստ ու կաց, կանկարասի, գործիքներ են. հոն բազմիցս կը յայտնուին, որոնցմէ կարելի է օգտուիլ ուսումնասիրութեանց համար:

Ուրիշ տաղաշարքներ ալ ուրիշ առիթ: Կը շարունակեմ զանոնք Քուչակեան անունանել միայն հետեւելով ընդունուած կանոնին:

